***478. Ս. ԶՈՐԱՎԱՐ ԵԿԵՂԵՑԻ.*** մուտքի ճակատին, 6 տող.



ԿԱՄԱՒ ՆԱԽԱԽՆԱՄՈՂԻՆ ԱՅ, ՀԱՒՐ, ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒ-
ԹԵ[ԱՆ] ՏՐ ՅՈՎ[ՀԱՆՆԵՍ]Ի, Ի ԹՎԻՍ ՀԱ ՅՈՑ [ՉԻԸ] (1279), ԵՍ՝ ԲԱՐՍԵՂ ՔԱՀԱՆԱ, ԿԱՆԳՆ-
ԵՑԻ ԶՍԲ ԶԱՒՐԱՎԱՐՔՍ ԵՒ ՇԻՆԵՑԻ ԶԽՈՐԱՆՍ ԼՈՒՍՈՅ
ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՑՍ՝ ՄԵԾԱՒ ՋԱՆԻՒ ԵՒ ՔՐՏՆԱՄՈՒԽ ԱՆՁ-
ԱՄԲՍ ԻՄՈՎ՝ Ի ՓՐԿՈՒԹԵ[ԱՆ] ՀՈԳՈՅ ԻՄՈՅ ԵՒ ՅԻՇԱՏԱԿ ՄԵԶ ԵՒ
ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ ԵՒ ՍՆՈՒՑՈՂԱՑՆ:

*Հրատ.* Երզնկյան, 66, «Ազգ. հանդ.», VII-VIII, 414, ՎՏ, 121, Ղաֆադարյան, Հաղբատ, 246:

***Ծանոթ.*** Քանի որ *կանգնեցի* բառը կիրառական է խաչքարի համար. ուստի Կ. Ղաֆադարյանը գրում է. «*Ս. Զորավարք* կոչվել է խաչքարը, որը կանգուն է մինչև այժմ, այդ խաչքարի անունով էլ (Գեորգ զորավար) այդ վայրն է կոչվում»: Այս դեպքում Գևորգ զորավարին առնչումը թնական է, քանի որ խոսքը վերաբերում է ***կանգնեցի զսբ զաւրաւարքս***, որոնք, այդ զորաւարք-խաչքարերը, այժմ էլ կան տեղում: Ինչ վերաբերում է *շինեցի զխորանս լուսոյ* բառակապակցությանը, ապա այս պատշաճում է լուսեղեն, աստվածային խորանի՝ եկեղեցու կառուցմանը: Եկեղեցին, ավերված գավթով, գտնվում է վանքից հարավ, Սեդիկ գետակի ձախ կողմում, այգիների մեջ:

***479. ԽԱՉՔԱՐ Ս. ԿԻՐԱԿԻ.*** գյուղի ծայրին, Սանահնի ճանապարհի եզրին, պատվանդանին, 6 տող.



ՅԱՄԵՆԱՅՆՔ ԱՆՊԻՏԱՆՍ՝ ՍԱՐԳԻՍ, ՆՈՐՈԳ-
ԵՑԻ Ի ՀԻՄԱՆՑ ԶՏԱՃԱՐ ՍՐԲՈ ՆՇԱՆԻՍ: ԱՐԴ,
ԱՂԱՉԵՄ Զ[ԸՆ]ԹԵՐՑՈՂՍԴ ԵՒ ԶԱՄԵՆԵՍԵԱՆ, ՈՐՔ
ԵՐԿՐՊԱԳԷՔ ՍՐԲՈ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾՆԻՍ՝ ՅԻՇԵՍՋԻ-
Ք ՅԱՂԱԻԹՍ ՋԵՐ ԶԾՆՈՂՍՆ ԻՄ ԵՒ ԶԻՍ՝ Զ-
ՎԵՐԱԳՐԵԱԼԴ ԱՆՈՒՆ, ԵՒ ԱԾ ԶՁԵԶ
ՅԻՇԵՍՑԷ: ԱՄԷՆ:
: ՈԼԷ : ԹՎ[ԻՆ] (1188):

*Հրատ.* Դրիմեցի, 37, Երզնկյան, 67, «Ազգ. հանդ.», VII-VIII, 416, ՎՏ, 37, Ղաֆադարյան, Հաղբատ, 246-247:

***Ծանոթ.*** Արձանագրությունը տեղեկացնում է Ս. Նշան եկեղեցին *ի հիմանց* նորոգելու մասին, որը, իհարկե, տարածված չափազանցություն է:

Արձանագրության համաձայն, խաչքարը կոչվում է Ս. Աստվածածին, իսկ ժողովուրդն այն անվանում է Ս. Կիրակի՝ նվիրված Քրիստոսի հարության՝ հանգստյան օրվանն ու աստվածային պաշտամունքին:

Խաչքարը գտնվում է *Չղացածորի* ճանապարհին՝ գյուղի հարավարևմտյան եզրում, ավերված Ս. Աստվածածին կոչվող մատուռի մոտ, ներկայումս դեպի մեծ խճուղի տանող ճանապարհի եզրին:

***480. Ս. ՍԻՈՆ (Առաջադեմ) ՄԱՏՈՒՌ.*** արևմտյան ճակատի քիվին, 2 տող.



ՇՆՈՐՀԱՒՔ ՏՆ ՅԻ, ՀՐԱՄԱՆԱՒ ՏՐ ՅՈՎ[ՀԱՆՆԻՍԻ], ԳՐԵ[ՑԱՒ ԳԻՐՍ Յ]ԻՇԱՏԱԿԻ Գ (3) Ք[Ա]Հ[ԱՆԱՅ]Ի[Ց ԵՂԲԱՐՑ՝ ԱՆԴՐԷԻ, ԴԱՆԻԵԼԻ, ՏԻՐԱՆՆՈ, ԳՈՐԳԱ. Ի ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՆՑ ՄԵՐ ՇԻՆԵՑԱՔ ԶՍԲ ՍԻՈՆՍ ԲԱՐԵԽԱՒՍ ԱՌ ՔՍ ՄԵ-]

Զ ԵՒ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ: ԵՒ ԸՆ[ԾԱՅԵ]ՑԱՔ Ի ՍՄԱ ԴՃ (400) ՍՊԻՏԱԿ, ԳՆԱԾ ԷԳԻՆ Ի ՀԱՑԱԳՈՍՍ ԵՒ [Ի ԳԱՆՁԱՀԱՆՔՆ: ՄԵՆ ՄԻ ԽԱՉԱՒԳՆԷԻՒ ԶՄԵԶ ՅԻՇԵԼ]...

*Հրատ.* Ղրիմեցի, 37, Երզնկյան, 68, «Ազգ. հանդ.», VII-VIII, 416, Ղաֆադարյան, Հաղբատ, 248-249:

***Ծանոթ.*** Սրբատաշ բազալտով շարված այս փոքրիկ եկեղեցին գտնվում է գյուղի հյուսիսային մասում: Արձանագրություններում կրում է սուրբ Սիոն անունը՝ նկատի ունենալով Երուսաղեմի սրբացված լեռան վրա Քրիստոսի չարչարանքներն ու Տիրոջ ճշմարիտ եկեղեցի լինելու հանգամանքը: Ավանդաբար կոչվում է նաև Առաջադեմ՝ նկատի ունենալով այն վանքից ավելի առաջ, Գրիգոր Լուսավորչի ժամանակներում կառուցված լինելու պատումը (Ե. Լալայան):

Մատուռ-եկեղեցին կառուցել են միաբան չորս եղբայրները 1268 թ.՝ համաձայն շինարարության առթիվ կանգնեցված խաչքարի արձանագրության:

Արձանագրությունը խիստ վնասված է, իսկ քարերի մի մասը՝ ոչնչացած, ուստի Կ. Ղաֆադարյանը այն լրացրել է «Ղրիմեցու ընդօրինակությունից, նրա արտագրման ժամանակ արձանագրությունը դեռևս ամբողջական է եղել, բայց վերծանությունն այնքան էլ ճիշտ չէ, ինչպես այդ երևում է մնացած բեկորներից»:

Նկատվել է արդեն, որ միաբանության անդամները՝ *քահանայից եղբարց,* չորսն են թե այստեղ, թե իրողությունը կրկնող խաչքարի արձանագրության մեջ, սակայն վկայված են Գ (3) թվով, որը համարվել է Դ-ի (4) հետ շփոթմունք:

Կ. Ղաֆադարյանի ենթադրությամբ՝ *գանձահանքը* պետք է լիներ Պղնձահանքը՝ «այժմյան Շամլուղի հանքերը»:

***481. Ս. ՍԻՈՆ ՄԱՏՈՒՌ.*** արևելյան պատին, 2 տող.



ԵՒ Թ (9) ՊԱՏԱՐԱԳ ՄԵՁ. Գ (3) Ի ԾՆԸՆԴԵ[ԱՆ]Ն, Գ (3) ԶԱՏԿԻՆ, Գ (3) ՍԲ ԽԱՉԻՆ: ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ, ՈՎ ԽԱՓԱՆԷ՝ ԴԱՏԻ Ի ՏԷ:

*Հրատ.* Որբունցի, 38, Երզնկյան, 68, «Ազգ. հանդ.», VII-VIII, 416-417, Ղաֆադարյան, Հաղբատ, 247:

*Ծանոթ.* Արձանագրության սկիզբը չի պահպանվել: Ցույց քն Նախորդի շարունակությունն է:

*482. Ս. ՍԻՈՆ ՄԱՏՈՒՌ.* նախորդի տակ, 2 տող.

ԵՍ՝ ՏՐ ՅՈՎ[Ա]ՀԱՆՆԷՍ [Ե]ԶԱՔԱՆՉԱՏԱՓԻ ՋԻՒՐ ԷԳԻՆ ԱՅԼ Ի ՍԲ ՍԻՈՆՍ ՏՎԱՔ: ՈՎ ՀԱԿԱՌԱԿԻ ԿԱՄ ԽԼԵԼ ՋԱՆԱ՝ ԿԱՊԱԾ Է ՅԱՅ ԵՒ ՄԵՐ ՄԵՂԱՑՆ ՏԷՐ Է:

*Հրատ.* Որբունցի, 38, Երզնկյան, 68, «Ազգ. հանդ.», VII-VIII, 416-417, Ղաֆադարյան, Հաղբատ, 247:

*Ծանոթ.* Այս արձանագրությունը միանգամայն ամբողջական է, սակայն Նախորդ հրատարակողները միացրել են առաջինին՝ համակցված և միաժամանակ գրված լինելու պատճառով, բև ընդգծված է, որ տեր Հովհաննեսը Ս. Սիոն եկեղեցու կառուցման, ընծաների, պատարագաժամերի հաստատումից բացի առանձին նվիրել է Զաքանչատափի այգին:

*Գրչագիրը Նախորդում (խմբ.)*

*483. ԽԱՉՔԱՐ.* հենւած Ս. Սիոն մատուռին, շրջանակներին, 4 տող.



ԿԱՆԳՆԵՑԱՒ ԽԱՉՍ Ի ԲԱՐԷԽԱՒՍՈՒԹԻ[ՒՆ] ՉՈՐԻՑ
ԵՂԲԱՐՑ՝ ԱՆԴՐԷԻ,
ԴԱՆԻԷԼԻ, ՏԻՐԱՆՆՈ, ԳՈՐԳԱՒ ԵՒ ԾՆԱՒՂԱՑ ՈՂՔ[ԱՑԵԼՈՑ]:
Ի ԹՎԻ[Ն] ՉԺԷ (1268):

*Հրատ.* Ղաֆադարյան. Հաղբատ, 250:

*Ծանոթ.* Խաչքարն, ակներևաբար, կանգնեցվել է Ս. Սիոն մատուռի շինարարության առիթով. *ի բարեխաւսութիւն չորից եղբարց*՝ հիշատակելով նրանց անունները:

Սիա հենց այս առումով միանգամայն իրավացի է Կ. Ղաֆադարյանը, երբ շինարարական արձանագրությունը խաչքարին ժամանակակից է համարում, որը համահունչ է մատուռի ճակատի արձանագրությանը:

*484. ԽԱՉՔԱՐ.* Ս. Սիոն մատուռի արևմտյան մուտքի հարավային կողմում, ճակատին, 13 տող.




Ի ՆԾԴ (1005) ԹՈՒ[ԻՍ], Ի ՀԱՅՐՈՒԹ[ԵԱՆ] ՍԻ-ՄԵՒՈՆԻ, ԵՍ՝ ԱԹԱՆԱԳԻՆԻ ԵՒ ՓԻԼԱՔՍՈՆ, ԿԱՆԳ-ՆԵՑԱՔ ԶՍՈՒՐԲ ԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՈՑ ՄԵՐՈՑ,
ԵՒ ՅԱՒԳՆ-
ԱԿԱ-
ՆՈՒԹԻՒՆ
ԹԱԳ-
ԱՒՈՐ-
ԻՍ
ՄԵ-
ՐՈՅ
ԴԱՒ-
ԹԻ
ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԵՐԿՐՊԱԳՈՒ-
ԱՑ ԻՒՐՈՑ

*Հրատ.* Դրիմեցի, 42, Երզնկյան, 68, «Ազգ. հանդ.», VII-VIII, 416, ՎՏ, 12, Մովսիսյան, 48, Ղաֆադարյան, Հաղբատ, 249:

*Ծանոթ.* Խաչքարը կանգնեցվել է ոչ միայն հեղինակների հոգու փրկության համար, այլ նաև *յաւգնականութիւն թագաւորիս մերոյ Դաւթի,* որտեղ խոսքը վերաբերում է Դավիթ Անհողինին: Հայր *Սիմեւոնը* հիշված է նաև Մեծ Գավթի 1004թ. արձանագրության մեջ: Նա առաջին վանահայրն է:

## ԿԱՅԱՆ ԲԵՐԴ

*485. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.* Կայան բերդում, արևմտյան ճակատին, 6 տող.

+ԻԹԻ:ՈՀԲ:



Ի ԹՎ[ԻՆ] :ՈՀԲ: (1233),

ԿԱՄԱՒՆ ԱՅ, ԵՍ՝ ՏՐ ՅՈՀԱՆԷՍ, ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՂԲԱՏԱ, ՔՈՒԵՐՈՐԴԻ ՄԵԾ ՊԱՏՐՈՆԱՑՆ ԶԱՔԱՐԷԻ ԵՒ ԻՒԱՆԷԻ, Ի ԺԱՄԱՆԱԿԻ, ՈՐ ԵՀԱՍ ՍԱՍԱՆՈՒՄՆ ԱՇ[ԽԱՐՀԻՍ ՄԵՐՈՅ ԱՆԱՒՐԷՆ ԽՈՐԱԶՄ]-

ԵՆՑ, ՈՉ ԳՈՅՐ ՏԵՂԻ ԱՊԱՍՏԱՆԻ ՍԲ ՆՇԱՆԻՍ ԵՒ ԵՂԲԱՐՑՍ: ՀՐԱՄԱՆԱՒ ՔԵՌՈՅՆ ԻՄՈ ԻՒԱՆԷԻ ԵՒ ՈՐԴՈՅՆ ԻՒՐՈՅ ԱՒԱԳԻՆ, ԵՒ ՇԱՀՆՇԱՀԻ՝ ՈՐԴՈՅՆ ԶԱՔԱՐԷԻ, ՇԻՆԵՑԻ ԶԱՄՐՈՑ[Ս ԵՒ ԶԵԿԵՂԵՑԻՍ ՀԱՂԲԱՏԱ ՍԲ ՆՇԱՆԻՍ]

ԲԱԶՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԹ[ԵԱՄ]Բ: ԱՐԴ, ԵԹԵ ՈՔ ԶՍԱ Ի ՀԱՂԲԱՏԱ ՀԱՆԷ, ԹԷ Ի ՄԵԾԱՑ, ԹԷ Ի ՓՈՔՈՒՆՑ ԶԻՆՉ ԵՒ ԻՑԷ ՊԱՏՃԱՌԱՒ, ՄԱՐԴՆ ԱՅՆ ՆԶՈՎԵ[Ա]Լ ԵՂԻՑԻ Ի ՄԱՀ ԵՒ Ի ԿԵԱՆ[Ս, ԶԻՆՉ Ի ՅԱՂԱՄԱ ՄԻՆՉԵՒ Ի ԳԱԼՈՒՍՆ]